

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՅԻՄԿԱՆ  
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի ուղևորների բարձրակարգ սպասարկման (VIP) սրահի կառուցումը ավարտվել է և այն գործում է սույն թվականի մարտ ամսից: Ավարտվել են նաև նախագահական սրահի կառուցման աշխատանքները և արդեն շահագործվում է:

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի տարածքում ծառայություններ իրականացնող կազմակերպությունների համար նախատեսված աշխատավայրերի վերանորոգման և արդիականացման աշխատանքների կատարման նպատակահարմարությունը դեռևս գտնվում է քննարկման փուլում, այն կոնցեպտների կողմից կներառվի 2013 - 2017 թթ. Մաստեր պլանում և սահմանված կարգով կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար նոր բնակարաններով ապահովելու նպատակով՝ ավարտվել է նոր շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները և ներկայումս կատարվել է շուրջ 2,0 մլրդ դրամի կառուցման աշխատանքներ:

Հաշվետու տարում միջազգային ավիացիոն կառույցներին Հայաստանի Հանրապետության ավիացիոն համակարգի ինտեգրման ուղղությամբ Գլխավոր վարչության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ:

Եվրամիության պատվիրակության կողմից Եվրոպական Միության անդամ-երկրներին շրջանառված «Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կարողությունների զարգացում համընդհանուր ավիացիոն պահանջները և Եվրոպական միության ավիացիոն անվտանգության կանոնակարգերը կիրառելու նպատակով» «Թվինինգ» ծրագիրը շարունակվել է իրականացվել:

Ծրագրի ընթացքում իսպանացի մասնագետների մասնակցությամբ գնահատվում է օդաչուական անձնակազմերի, օդային երթևեկության կառավարման մասնագետների, տեխնիկական սպասարկման կազմակերպությունների, ավիացիոն ուսումնական և ավիացիոն բժշկական հաստատությունների ներկայիս վիճակը և համապատասխան փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը, երկկողմանի այցերի միջոցով կատարվում է փորձի փոխանակում:

Երկկողմանի միջազգային կապերը ընդլայնելու նպատակով, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝

1. 2012 թվականի նոյեմբերի 20-ին Աբու-Դաբի քաղաքում ստորագրվել է <<Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության

միջև օդային հաղորդակցությունների մասին իրենց համապատասխան տարածքներից դուրս» համաձայնագիրը:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսլանդիայի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) նախագիծը նախաստորագրվել է 2010 թվականի հունիսի 30-ին Մոնտեգո Բեյ քաղաքում: Իսլանդիայի լիազորված մարմնից ներկայումս ակնկալվում է ստանալ ստորագրման համար ընդունելի վայրի և ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն:

3. 2012 թվականի նոյեմբերի 29-ին Երևան քաղաքում Թուրքմենստանի Նախագահի Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ժամանակ ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի նախագիծը:

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով համապատասխան ընթացք է տրվել օդային հաղորդակցությունների մասին երկկողմանի հետևյալ համաձայնագրերի նախագծերին.

1. 2011 թվականի հոկտեմբերի 3-ից 6-ը Երևան քաղաքում անցկացված հայ-քուվեյթական միջկառավարական հանձնաժողովի նիստի շրջանակներում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի Պետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը ներկայումս գտնվում է վավերացման փուլում:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բահրեյնի Թագավորության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել 2012 թվականի մարտի 15-ի թիվ 296-Ա որոշմամբ: Այնուհետև անցել է «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներպետական ընթացակարգերը և լրամշակված տարբերակը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ ստորագրմանն ուղղված հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Հորդանանի Հաշիմյան Թագավորության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել 2012 թվականի մարտի 15-ի թիվ 298-Ա որոշմամբ: Այնուհետև անցել է «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներպետական ընթացակարգերը և լրամշակված տարբերակը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն՝ ստորագրմանն ուղղված հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

Գլխավոր վարչության համապատասխան մասնագետները մասնակցել են «Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ԵԿԱԿ) և Միացյալ ավիացիոն իշխանությունների (ՄԱԻ) ուսումնական կենտրոն» կազմակերպությունների կողմից 2012 թվականի համագործակցության ծրագրի շրջանակներում անդամ-երկրներին առաջարկված ուսումնական դասընթացներին:

Գլխավոր վարչությունը թոփչների անվտանգության մակարդակի բարձրացման և թոփչային պիտանիության հարցերով շարունակել է համագործակցությունը միջազգային և օդանավ արտադրող կազմակերպությունների հետ:

Շարունակվել է համագործակցությունը ՌԴ Ուլյանովսկ քաղաքի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) և Գլխավոր վարչության միջև: Այդ համագործակցության շրջանակներում Գլխավոր վարչությունը ստացել է առաջարկություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին 2012-2013 ուսումնական տարվանից ընդունել Ուլյանովսկի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) Թռիչքային ապարատների շահագործման բաժին՝ ուսուցումը իրականացնելով ՌԴ բյուջեի միջոցների հաշվին: Այդ նպատակով Գլխավոր վարչության կողմից տրվել է մրցույթի հայտարարություն, իրականացվել է մրցույթ, որի արդյունքում 5 առավելագույն միավորներ հավաքած դիմորդների փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջոցով ներկայացվել են ՌԴ կրթության և գիտության նախարարություն, որից հետո դիմորդները Ուլյանովսկի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանում (ինստիտուտում) անցել են համապատասխան բուժզննում և ներկայումս ուսանում են վերոնշյալ մասնագիտությամբ:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված անդամավճարների գծով պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում կատարված են:

Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի զարգացման ուղղությամբ, Գլխավոր վարչության պետի մասնակցության Երևան քաղաքում տեղի է ունեցել հանդիպումներ Ֆրանսիայի Հանրապետության Նիցցա քաղաքի օդանավակայանի նախկին տնօրեն՝ պարոն Մուրադ Սարկիսյանի հետ: Վերջիններս հաստատել են իրենց պատրաստակամությունը՝ օգտագործելու սեփական փորձը, Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի զարգացման գործում: Ուսումնասիրվել է Հայաստանի մի քանի օդանավակայանների հնարավորությունները և կազմվել է աշխատանքային ծրագիր՝ Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի ստեղծման և զարգացման ուղղությամբ: 2012 թվականի հունիսի 22-ին գրանցվել է ավիասիրողների հայկական ակումբ «Սավառնակ» հասարակական կազմակերպությունը, որի կանոնադրական նպատակն է փոքր ավիացիայի զարգացման խթանումը:

2012 թվականի հունիսի 8-ին գրանցվել է նոր <Սքայ Նետ Էրլայն> ավիաընկերություն, որը գրանցել է <JETSTREAM Series 3200> տիպի փոքր օդանավ, որով նախատեսվում է իրականացնել ներքին չվերթեր:

Ավիաուսումնական կենտրոն ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է մրցույթ՝ փոքր օդանավ վարձակալելու նպատակով օդաչու-ուսանողների թռիչքային պրակտիկայի անցկացման համար:

Գլխավոր վարչության աշխատակիցները իրականացրել են «Զվարթնոց» օդանավակայանում ուղևորների սպասարկման գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև համագործակցել են ՀՀ օդանավակայաններում իրենց գործառնություններն իրականացնող պետական կառավարման այլ մարմինների հետ՝ աջակցելով նրանց առջև դրված խնդիրների կատարմանը: Պարբերական վերահսկողություն է իրականացվել «Զվարթնոց» օդանավակայանի աերոդրոմային միջոցների և ավիաընկերությունների շահագործողական վիճակների նկատմամբ:

2012 թվականին Գլխավոր վարչության կողմից սահմանված կարգով ուսումնասիրվել, վերլուծվել և համապատասխան ընթացք է տրվել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության

կառավարությունից, օրենսդիր և գործադիր մարմիններից ու անհատ քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված թվով 4479 գրությունների:

Գլխավոր վարչությունը հասարակայնության հետ կապերի առումով հաշվետու տարում ակտիվ համագործակցել է ՁԼՄ-ների հետ: Համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու հասարակությանը հետաքրքրող խնդիրների պարզաբանումները լուսաբանվել են տպագիր մամուլով, ռադիոյով և հեռուստատեսությամբ: Հասարակության իրազեկման գործում մեծ նշանակություն ունեցող նորացված Գլխավոր վարչության պաշտոնական երկլեզու (հայերեն, անգլերեն) ինտերնետ կայքում տեղադրվում են Գլխավոր վարչության գործունեության, Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտին վերաբերող նորությունները:

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել <<Ավիացիայի մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որը ընդունվել է 2012 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-31-Ն օրենքով:

Մշակվել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ են դրվել <<Ավիացիայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

2012 թվականի ընթացքում մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության Վարչապետի հաստատմանն են ներկայացվել հետևյալ նորմատիվային և անհատական որոշումների նախագծերը.

1. <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը գումար հատկացնելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, որը ընդունվել է 2012 թվականի մարտի 29-ի N 357-Ա որոշումով:
2. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. փետրվարի 13-ի N 202-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, որը ընդունվել է 2012 թվականի մայիսի 3-ի N 549-Ն որոշումով:
3. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. նոյեմբերի 18-ի N 1582-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, որը ընդունվել է 2012 թվականի հուլիսի 4-ի N 859-Ն որոշումով:
4. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. նոյեմբերի 26-ի N 1372-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, որը ընդունվել է 2012 թվականի հուլիսի 4-ի N 887-Ն որոշումով:
5. <<2003 թվականի մարտի 14-ին <<Հայաստանի Հանրապետության կառավարության, Սիբիր ավիաուղիների և Արմավիայի>> միջև ստորագրված ներդրումային պայմանագրի փոփոխությանը հավանություն տալու, լիազորություն վերապահելու և <<Արմավիա>> ավիաընկերություն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կատարած ծախսերը հատուցելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, որը ընդունվել է 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 1275-Ա որոշումով:

6. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի 944-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, որը ընդունվել է 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1434-Ն որոշումով:

7. «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշում, որը ընդունվել է 2012 թվականի մայիսի 16-ի N 427-Ա որոշումով:

Մշակվել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1448-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Գլխավոր վարչության պետի կողմից հաստատվել և պետական գրանցում են ստացել պետի կողմից ընդունված հետևյալ նորմատիվ իրավական ակտերը

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի ապրիլի 20-ի «Օդանավ շահագործողի վկայականի և ավիափոխադրողի մասնագրի նկատմամբ ներկայացվող պահանջների ու դրանց տալու կարգերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հուլիսի 29-ի N 108-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 58-Ն հրաման:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 10-ի N 53-Ն հրամանում լրացում կատարելու մասին» N 116-Ն հրաման:
3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մարտի 9-ի N 41-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 164-Ն հրաման:
4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ավիացիայի ավիացիոն մասնագետներին վկայականներ տալու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 1999 թվականի հունվարի 12-ի թիվ 5 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 212-Ն հրաման:
5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2003 թվականի հունվարի 10-ի N 6-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 226-Ն հրաման:

2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն օդային տրանսպորտով տեղափոխվել է 1.763.383 ուղևոր, 2011 թվականի

համեմատ աճը կազմում է 5,3 % /տես՝ Աղյուսակ 1/: <<Արմավիա>> ավիաընկերության կողմից նույն ժամանակահատվածում տեղափոխվել է 405.945 ուղևոր, ինչը կազմում է 2011 թվականին տեղափոխված ուղևորների քանակի 74,2 %:

### **ԹՈՒՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

2012 թվականին Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրում գրանցվել է 39 օդանավ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրից հանվել է 18 օդանավ:

Տրվել են քաղաքացիական օդանավի պիտանիության 62 և օդանավի աղմուկի 5 սերտիֆիկատներ, ինչպես նաև՝ օդանավի ռադիոկայանի 56 վկայական ու օդանավի թռիչքի 5 թույլտվություն:

Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի թվով 44 տեսչական ստուգումներ կատարվել են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում:

Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվել են օտարերկրյա օդանավերի թվով 56 ստուգումներ համաձայն SAFA ծրագրի, և կատարված ստուգումների հաշվետվությունները գրանցվել են տվյալների բազայում:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են ավիաընկերությունների կողմից վտանգավոր բեռների օդային փոխադրման սպասարկման աշխատանքների վերաբերյալ ուսումնասիրություններ և տրվել են թվով 8 թույլտվություններ:

Գլխավոր վարչության կողմից կատարվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների բազաների և գծային կայանների մի շարք ուսումնասիրություններ և սերտիֆիկացում Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում:

2012 թվականի ընթացքում SAFA, ԹՎԻՆԻՆԳ և Տրասեկա ծրագրերով ԻԿԱՕ և ԵՄ ավիացիոն ուսումնական հաստատություններում թվով 6 աշխատակից մասնակցել են վերապատրաստման 18 դասընթացների և ստացել համապատասխան սերտիֆիկացում:

### **ԹՈՒՉՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետությունում գրանցված քաղաքացիական օդանավերի թռիչքային պիտանիությունն և թռիչքների անվտանգությունն ապահովելու նպատակով 2012 թվականին կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից քննարկվել և տրվել է թվով 48 վկայականներ ու 726 այլ թույլտվություններ թռիչքային անձնակազմի անդամներին, ինժեներատեխնիկական կազմին, բորտուղեկցորդներին և օդային երթևեկության կարգավարներին, դադարեցվել է 3 վկայականի գործողության ժամկետ:
2. Իրականացվել է անգլերեն լեզվի իմացության հմտության թեստավորում, վերաթեստավորում և հարցազրույց թռիչքային անձնակազմի 20 անդամների

3. Ապահովվել են մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի հետ տեղի ունեցած միջադեպի քննության հանձնաժողովի աշխատանքներին:
4. 2012 թվականի ընթացքում SAFA, Թվինինգ և Տրասեկա ծրագրերով ԻԿԱՕ և ԵՄ ավիացիոն ուսումնական հաստատություններում թվով 6 աշխատակից մասնակցել են վերապատրաստման 11 դասընթացների և ստացել համապատասխան սերտիֆիկացում:

**ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ ԵՎ ՕՂԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

1. Երևանի հանգուցային շրջանում ԻԿԱՕ-ի բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN)-ի ժամանման, մեկնման (RNAV1 SID/ STAR) ստանդարտ երթուղիների, «Զվարթնոց» օդանավակայանի 09/27 վազրուղու վայրէջքի RNAV (GNSS) APCH+Baro VNAV (RNP 0.3) սխեմաների և Էրեբունի օդանավակայանի օդային տարածքի դասակարգման ներդրման միջոցառումների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 18.10.2012թ. N 1104 և Գլխավոր վարչության պետի 15.10.2012թ. N 172/Ս համատեղ հրամանով հաստատվել են անհրաժեշտ սխեմաները, որոնք մշակվել են «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ գլխավոր տնօրենի 13.04.2012թ. N80 հրամանով կազմավորվեց աշխատանքային խմբի կողմից, և 13.12.2012թ. ներդրվել:
2. Լրամշակվել և ներկայացվել են նոր հսկիչ թերթիկներ՝ ուղղված աերոդրոմների, աերոնավիգացիոն սպասարկում իրականացնող և օդանավերին վերգետնյա ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերահսկման համար:
3. Զմեռային ժամանակաշրջանում սահմանվել է վերահսկողություն «Զվարթնոց» օդանավակայանի աերոդրոմի շահագործողական վիճակի պահպանման նկատմամբ:
4. Մշակվել և ԻԿԱՕ է ներկայացվել 2011 թվականին թռչունների հետ օդանավերի բախումների վերաբերյալ տարեկան հաշվետվություն:
5. Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի և Լոռու մարզերում նոր տեղադրվող հակակարկտային կայանների աշխարհագրական կոորդինատները: Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն Հայաստանի Հանրապետությունում տեղադրված հակակարկտային կայաններն արտապատկերվել են օդային մայրուղիների սխեմաների (EN-ROUTE CHART) վրա:
6. Իրականացվել է «Հայաերոնավիգացիա» ՓԲ ընկերության օբյեկտների աուդիտ, համաձայն հաստատված ժամանակացույցի:
7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ավիացիայի գլխավոր վարչության և «Ստեփանակերտ» օդանավակայանի մասնագետներին տրամադրվել է խորհրդատվություն: Ուսումնասիրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Ստեփանակերտ» օդանավակայանի շահագործողական վիճակը:
8. Ուսումնասիրվել է «Ստեփանավան» օդանավակայանի շահագործողական վիճակը՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար վերագործարկելու նպատակով:

**ՕՂԱՅԻՆ ՓՈԽԱՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ**

1. Մշակվել, ստորագրվել և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից գրանցվել է 2012 թվականի ապրիլի 20-ի «Օդանավ շահագործողի վկայականի և ավիափոխադրողի մասնագրի նկատմամբ ներկայացվող

պահանջների ու դրանց տալու կարգերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2009 թվականի հուլիսի 29-ի թիվ 108-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»> թիվ 58-Ն հրամանը:

2. Երկարացվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված թվով 8 (ութ) օդանավ շահագործողների <<Օդանավ շահագործողի վկայականների>> և <<Ավիափոխադրողի մասնագրերի>> գործողության ժամկետները, Հայաստանի Հանրապետություն գրանցված թվով 1 (մեկ) իրավաբանական անձի տրամադրվել է նոր <<Օդանավ շահագործողի վկայական>> և <<Ավիափոխադրողի մասնագիր>>: Դադարեցվել են թվով 3 (երեք) օդանավ շահագործողների վկայականներ և ավիափոխադրողի մասնագրեր: Թվով 1 (մեկ) իրավաբանական անձի տրվել է նոր օդանավ շահագործողի վկայական և ավիափոխադրողի մասնագիր:

3. Համաձայն ներկայացված հայտերի հաստատվել են Ամառ-2012 և Ձմեռ 2012-2013 չվացուցակները:

4. <<Արմավիա>> ավիաընկերությանը տրվել է 8 (ութ) օդային ուղու շահագործման թույլտվություններ:

5. Ոչ կանոնավոր չվերթերի թույլտվությունների հետ կապված մշտապես ուսումնասիրվել են փաստաթղթերը և հետևողականության ապահովման նպատակով համապատասխան տվյալները մուտքագրվել են էլեկտրոնային տվյալների բազա:

### **ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

1. Մշակվել է <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի N 1307-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը ներկայացված է Նախագահի աշխատակազմ՝ քննարկման համար:

2. Մշակվել, Հայաստանի Հանրապետության պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունների հետ համաձայնեցվել ու հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության քաղաքացիական պաշտպանության պլանը>>:

3. Մշակվել է <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգում առաջացած ճգնաժամային իրավիճակների կառավարման ազգային պլանը>>, որը ներկայացված է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ՝ քննարկման համար,

4. Մշակվել, և Գլխավոր վարչության պետի կողմից հաստատվել և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության գորահավաքային Պլանը>>:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի դրույթներին համապատասխան ուսումնասիրվել և հաստատման են ներկայացվել <<Շիրակ>> օդանավակայանի, <<Արմավիա>>, <<Սաութ-Էյրլանգ>>, <<Ատլանտիս Յուրոփեան Էյրվեյս>>, <<Սկիվա Էյր>>, <<Արկ Էյրվեյս>> և <<Էյր Արմենիա>>, <<Տարոն ավիա>>, <<Հայք ավիա>>, <<Ռիլայբլ յունիք սերվիսիզ ավիեյշն>>, <<Ռիջ Էյրվեյգ>> և <<Սքայ նեթ Էյրլայնգ>> ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը:



ԻԿԱՕ «Անվտանգություն» N17 հավելվածի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի պահանջներին համապատասխանության նպատակով ուսումնասիրվել են նաև օտարերկրյա՝ «Աերոֆլոտ-ռուսական ավիաուղիներ», «Չեխական ավիաուղիներ», «Սիրիական ավիաուղիներ», «Ֆլայ Դուբայ», «Ավստրիական ավիաուղիներ», «LOS», «Թայմիր», «Իրան Ասեման Էյրլայնզ», «Յուտ Էյր», «Յամալ», «Սիբիր», «Պոյոտ», «Էյր Բուգարիա», «Նուվել Էյր», «Աերոսվիտ», «Տրանսաերո», «Էյր Բալթիկ», «Ալիտալիա», ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը:

2012 թվականի ընթացքում կազմակերպվել և անց է կացվել «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության ավիացիոն անվտանգության ծառայության 33 աշխատողների և «Հայաերոնավիագացիա» ՓԲ ընկերության ավիացիոն անվտանգության ծառայության 24 աշխատողների ատեստավորում,

2012 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել է ավիացիոն անվտանգության մասով տեսչական ստուգումներ «Արմենիա միջազգային օդանավակայաններ», «Հայաերոնավիագացիա», «Էյր Արմենիա», «Ավիասերվիս», «Էյ Դի Էֆ շոփս» ՓԲ ընկերություններում, «Շիրակ» օդանավակայանում և բացահայտված թերությունների ու անհամապատասխանությունների մասով համապատասխան առաջարկությունները ներկայացվել են վերը նշված ընկերությունների տնօրինություններին:

Ավիացիոն անվտանգության մասով գործնական և ուսումնական դասընթացներ են կազմակերպվել «Զվարթնոց» օդանավակայանում «Ստեփանակերտ» օդանավակայանի ավիացիոն անվտանգության և ուղևորների փոխադրումների ծառայությունների 31 աշխատակիցների հետ:

2012 թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 4-ը ԵԿԱԿ ավիացիոն անվտանգության աուդիտի խմբի կողմից իրականացվել է Գլխավոր վարչության և «Զվարթնոց» օդանավակայանի ավիացիոն անվտանգության համակարգի աուդիտ, որի արդյունքներով ավիացիոն անվտանգության մակարդակը աուդիտի խմբի կողմից գնահատվել է դրական:

2012 թվականի ընթացքում ավիացիոն անվտանգության վարչություն են ստացվել 97 հայտ թոփչքային անցագրերի ստացման համար, պատրաստվել և հատկացվել է 865 թոփչքային անցագիր:

2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Նախագահի և արտասահմանյան երկրների բարձրաստիճան ղեկավարների, ԱԺ նախագահի, Վարչապետի մեկնումների և Ժամանումների ընթացքում իրականացվել են միջոցառումներ կապված չվերթերի անվտանգության ապահովման հետ: Ավիացիոն անվտանգության մասով ապահովվել է 40 Լիտեր «Ա» և 8 հատուկ չվերթերի սպասարկում:

Ուսումնասիրվել են ՀՀ օդային տարածքով վտանգավոր բեռների փոխադրման 85 հայտեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկներ փոխադրման թույլտվություններ տալու վերաբերյալ:

Կատարվել է քաղաքացիական ավիացիայի համակարգում պետական պահուստի առկա գույքի և նյութերի պահպանության, ապաստարանների, կառավարման համանատարական կետի վիճակի ուսումնասիրություն և համապատասխան եզրակցությունները ներկայացվել են Գլխավոր

վարչության ղեկավարության քննարկմանը, որի արդյունքում կազմվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց: Իրականացվել են ապաստարանների ու կառավարման համանատարական կետի վերանորոգման գույքի թարմացման ուղղությամբ, բջջային կապի ալեհավաքների տեղադրման և հրամանատարական կետը նոր կապի միջոցներով ու համակարգչային տեխնիկայով ապահովման աշխատանքներ:

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանում զննման ընթացքում հայտնաբերվել է.

1)զենք.

ա/ 2 հատ <<Մակարով>> տիպի ատրճանակ 16 փամփուշտներով,

բ/ 1 հատ գազային ատրճանակ <<Վոլտրա>> տիպի 3 փամփուշտներով,

գ/ 2 հատ պնևմատիկ ատրճանակ MP 645A տիպի 4մմ,

2)զինամթերք.

ա/որսորդական հրացանի փամփուշտներ՝ 16մմ -5 հատ,

բ/ AK-74 ինքնաձիգի փամփուշտ-1 հատ,

3) արգելված իրեր-/ծալովի դանակներ՝ 3 հատ/

4 ղեղանյութեր՝ 4 դեպք

5) դյուրավառ հեղուկներ - 25 լիտր /տնական օղի, ացետոն, պերեկիս/,

6)անցագրային վերահսկողության խախտում - 6 դեպք,

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանում պահպանության տակ վերցված է 213 օբյեկտ, հակահրդեհային պահպանության տակ վերցված է 74 օբյեկտ, գործում է 223 տազնապի ազդանշանային համակարգ, այդ թվում՝ պահպանության 139 և հրդեհի 64 ազդանշան: Գործում է փակ հեռուստահսկման համակարգը, որի միջոցով իրականացվում է հսկողություն ուղևորների սպասարկման ողջ գործընթացի և օդանավակայանի վերահսկելի գոտիներում անցագրային ու ներօբյեկտային վերահսկողության կանոնների պահպանման նկատմամբ:

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի վթարափրկարարական /հակահրդեհային/ ծառայությունն իրեն վերաբերվող մասով ապահովվել է.

ա/ Լիտեր <<Ա>> չվերթեր - 40,

բ/ օդանավերի լիցքավորման աշխատանքներ - 646,

զ/ հարկադիր վայրէջքներ - 4,

դ/ շինվերանորոգման և եռակցման հակահրդեհային ապահովում - 3,

ե/ հրդեհներ- /խոտի այրման դեպքեր/ - 8:

<<Շիրակ>> օդանավակայանում ուղևորների զննման ընթացքում հայտնաբերվել և առգրավվել է՝

-արգելված իրեր-/դանակներ, մկրատներ, խարտոցներ և այլն/ - 17 հատ,

-դյուրավառ հեղուկներ - 16 լիտր,

Պահպանության է վերցված 23 օբյեկտ, գործում է 2 պահպանության ազդանշանային համակարգ:

2012 թվականի ընթացքում անհրաժեշտ աշխատանքներ են տարվել քաղաքացիական ավիացիայի համակարգում աշխատող զինապարտ պահեստագործայինների ցուցակների ճշտագրման, նրանց ամրագրման /150 մարդ/ և համապատասխան զինկոմիսարիատներ ներկայացման մասով: Ապահովվել է մասնակցությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կազմակերպած <<Փոխհամագործակցություն 2012>> հավաք – պարապմունքներին:

2012 թվականին ընթացքում քաղաքացիական ավիացիայի համակարգի ընկերություններում իրականացվել են քաղպաշտպանությանն վթարափրկարարական ապահովմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- քաղաքացիական պաշտպանության և հրշեջ փրկարարական խմբերի համատեղ հրամանատարաձտաբային ուսումնավարժանք <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանում/07.06.2012թ. և 27.11.2012թ./

- պարբերաբար /24 անգամ/ փորձնական տագնապների միջոցով ստուգվել է <<Զվարթնոց>> օդանավակայանի վթարա-փրկարարային հաշվարկների մարտունակությունը, օդանավակայանում և ընկերություններում առկա փրկարարական գույքն ու հանդերձանքի վիճակը:

Հաշվետու ժամանակաշրջանում Կիև և Բրյուսել քաղաքների ԻԿԱՕ ավիացիոն անվտանգության ռեգիոնալ ուսումնական կենտրոնում վերապատրաստվել են 5 աշխատակիցներ վտանգավոր բեռների փոխադրման, ճգաժամային իրավիճակների կառավարման, զննման տեխնիկական սարքավորումների, քաղաքացիական ավիացիայի համակարգում կիբեռանվտանգության ապահովման աշխատանքների և ավիացիոն անվտանգության աուդիտորների ուսուցման մասով:

2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ավիացիայում անօրինական միջամտության դեպքեր չեն գրանցվել:

**«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ**

1. 2012 թվականի սեպտեմբերի 24-ից 28-ը Շաղկաձոր քաղաքում օդային երթուղիների զարգացման հետ կապված անցկացվել է ԻԿԱՕ-ի RDGE/17 խորհրդակցությունը:
2. 2012 թվականի ԻԿԱՕ-ի ուսումնական կենտրոններ որակավորման բարձրացման դասընթացների են ուղարկվել 66 աշխատակից
3. <<Ավիատուսումնական կենտրոն>> ՓԲԸ-ում որակավորման բարձրացման դասընթացներ են անցել 12 աշխատակից
4. Ինքնուրույն աշխատանքի թույլտվություն է ստացել – 11 հոգի:
5. 2012 թվականին օդային երթուղիների կարգավարները ապահովել են՝  
թռիչք – վայրէջք – 10642, տարանցիկ թռիչքներ – 34228:
6. Ձեռք է բերվել <<Նոտամ>> սերվերի արդիականացման ծրագրային ապահովում և բարելավվել ՄՌԼՀ-11ԱԱ և <<Իրտիշ>> ռադարային համակարգերի տեխնիկական և տակտիկական բնութագրերը:
7. Կատարվել է ՎԿ<<Անդրանիկ>> օբյեկտի շենքի հիմնանորոգում, ռադիո և էլեկտրասարքավորումների ապամոնտաժում և վերամոնտաժում, պահուստային ինքնավար միացման համակարգով և հսկողությամբ դիզել գենարատորի տեղադրում:
8. Իրականացվել է ԱՌՊ-95 ռադիոպելենգիչի գնումը, տեղադրումը, ինտեգրումը և փորձարկումը:
9. Կատարվել է ՄՌԼՀ-11 համակարգի 10 կվ օդային գծի և էլեկտրասնուցման ենթակայանի նորոգում:
10. <<Քվանտ>> ԱՀԿ-ում տեղադրվել է <<Gamatronic>> չընդհատվող էներգասնուցման համակարգ:
11. <<Զվարթնոց>> օ/կ-ի տարածքում՝ օբյեկտների միջև կառուցվել է օպտիկամանրաթելային մալուխային ցանց:
12. Արդիականացվել է <<Գյումրի>> կուրսային ռադիոփարոսի էլեկտրասնուցման ցանցը:

### <<Ավիատուսումնական կենտրոն>>ՓԲԸ

2012 թվականին <<Ավիատուսումնական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորել են 152 ուսանող և վերապատրաստվել՝ 679 ավիացիոն մասնագետներ (օդաչուներ, կարգավարներ, ավիահինժեններ, ավիատեխնիկներ, ավիաընկերությունների ներկայացուցիչներ և բորտուղեկցորդներ):

Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության պահանջներին համապատասխան ուսուցում իրականացնելու և ուսուցման բարձր որակ ապահովելու նպատակով մշակվել և ներդրվել են Մաս 66-ի մոդուլները և <<Վառելիքաբաքի անվտանգություն>> և <<Էլեկտրացանցի տեղակայման համակարգ>> ծրագրերը: Կազմվել են ուսուցման ձեռնարկներ, վերանայվել են բոլոր կրթական ծրագրերը:

Բարելավվել են շենքային հարմարությունները, վերանորոգվել է 9 լսարան և ավիատեխնիկների համար նախատեսված տեխնիկական արհեստանոցը: Արհեստանոցի համար ձեռք են բերվել փորձասեղաններ, տեխնիկական սարքավորումներ ու գործիքներ: Համալրվել է նաև կենտրոնի գրադարանը Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության կողմից հաստատված տեխնիկական սպասարկում իրականացնող մասնագետների համար 24 նոր դասագրքերով և համապատասխան CD սկավառակներով:

Խիստ կարևորելով դասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածության դերն ուսուցման որակի և ժամանակակից կրթական պահանջների ապահովման գործում՝ կենտրոնի երկու դասախոս-ռեյթերներ 2012 թվականին վերապատրաստվել են Կիևի ԻԿԱՕ-ի ավիացիոն ինստիտուտում, իսկ օդաչու-հրահանգիչը վերապատրաստվել է Մոսկվայում:

Կենտրոնի գերակա խնդիրը եղել և մնում է օդաչու-ուսանողների թռիչքային պրակտիկայի անցկացման նպատակով օդանավի վարձակալումը:

**«Ավիաբուժ» բժշկական կենտրոն» ՓԲԸ**

2012 թվականի ընթացքում բժշկական հետազոտության են ենթարկվել 182 օդաչու, 75 բորտուղեկցորդ, 85 կարգավար, 2180 վերգետնյա ծառայության աշխատողներ, իրականացվել է 26000 աշխատողի նախահերթափոխային և նախաթռիչքային բժշկական ստուգում և 2150 սանիտարական հետազոտություն:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի

2008-2012 թվականների տարեկան հիմնական արտադրական

ցուցանիշներ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավորը	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2012թ. կատարողականը 2011թ. նկատմամբ%
1	Փոխադրված ուղևորներ	հազ.մարդ	1506.979	1469.346	1664.431	1674.394	1763.383	105.3
2	Փոխադրված բեռ և փոստ	տոննա	10839	8407	8802	10033	12280	122.4
3	Թռիչք-վայրէջքներ	հատ	8791	8892	10056	10149	10645	104.9
4	ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթներ	չվերթ	32282	29622	32315	36211	34228	94.5

**Հ Ա Մ Ա Ռ Ո Տ   Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՆԹԵՐ**  
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

Եվրամիության պատվիրակության կողմից Եվրոպական Միության անդամ-երկրներին շրջանառված «Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կարողությունների զարգացում համընդհանուր ավիացիոն պահանջները և Եվրոպական միության ավիացիոն անվտանգության կանոնակարգերը կիրառելու նպատակով» «Թվինինգ» ծրագիրը շարունակվել է իրականացվել:

Ծրագրի ընթացքում իսպանացի մասնագետների մասնակցությամբ գնահատվում է օդաչուական անձնակազմերի, օդային երթևեկության կառավարման մասնագետների, տեխնիկական սպասարկման կազմակերպությունների, ավիացիոն ուսումնական և ավիացիոն բժշկական հաստատությունների ներկայիս վիճակը և համապատասխան փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը, երկկողմանի այցերի միջոցով կատարվում է փորձի փոխանակում և վերապատրաստում:

Երկկողմանի միջազգային կապերը ընդլայնելու նպատակով, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով աշխատանքներ են իրականացվել 7 պետությունների հետ երկկողմանի պայմանագրեր կնքելու համար:

2012 թվականի ընթացքում <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար նոր բնակարաններով ապահովելու նպատակով՝ ավարտվել է նոր շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները և ներկայումս կատարվել է շուրջ 2,0 մլրդ. դրամի կառուցման աշխատանքներ:

Գլխավոր վարչության աշխատակիցները իրականացրել են «Զվարթնոց» օդանավակայանում ուղևորների սպասարկման գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև համագործակցել են ՀՀ օդանավակայաններում իրենց գործառույթներն իրականացնող պետական կառավարման այլ մարմինների հետ՝ աջակցելով նրանց առջև դրված խնդիրների կատարմանը: Ձմեռային շրջանում պարբերական վերահսկողություն է իրականացվել «Զվարթնոց» օդանավակայանի աերոդրոմային միջոցների շահագործողական վիճակի նկատմամբ:

ՌԴ Ուլյանովսկ քաղաքի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) և Գլխավոր վարչության համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 5 քաղաքացիներ 2012-2013 ուսումնական տարվանից ընդունվել են Ուլյանովսկի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) Թռիչքային ապարատների շահագործման բաժին, ուսուցումը իրականացնելով ՌԴ բյուջեի միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի զարգացման ուղղությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի մասնակցության Երևան քաղաքում տեղի է ունեցել հանդիպումներ Ֆրանսիայի Հանրապետության Նից քաղաքի օդանավակայանի նախկին տնօրեն՝ պարոն Մուրադ Սարկիսյանի հետ: Վերջիններս հաստատել են իրենց պատրաստակամությունը՝ օգտագործելու սեփական փորձը, Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի զարգացման գործում: Ուսումնասիրվել է Հայաստանի մի քանի օդանավակայանների հնարավորությունները և կազմվել է աշխատանքային ծրագիր՝ Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի ստեղծման և զարգացման ուղղությամբ: 2012 թվականի հունիսի 22-ին գրանցվել է

ավիասիրոդների հայկական ակումբ <<Սավառնակ>> հասարակական կազմակերպությունը, որի կանոնադրական նպատակն է փոքր ավիացիայի զարգացման խթանումը:

2012 թվականի հունիսի 8-ին գրանցվել է նոր <Սքայ Նետ Էրլայն> ավիաընկերություն, որը գրանցել է <JETSTREAM Series 3200> տիպի փոքր օդանավ, որով նախատեսվում է իրականացնել ներքին չվերթեր:

2012թ. մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության Վարչապետի կողմից հաստատվել են բնագավառին վերաբերվող թվով 7 նորմատիվային և անհատական, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի կողմից թվով 5 նորմատիվ իրավական ակտ:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի

2008-2012 թվականների տարեկան հիմնական արտադրական

ցուցանիշներ

h/h	Ցուցանիշի անվանումը	Չափի միավորը	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2012թ. կատարողականը 2011թ. նկատմամբ %
1	Փոխադրված ուղևորներ	հազ.մարդ	1506.979	1469.346	1664.431	1674.394	1763.383	105.3
2	Փոխադրված բեռ և փոստ	տոննա	10839	8407	8802	10033	12280	122.4
3	Թռիչք-վայրէջքներ	հատ	8791	8892	10056	10149	10645	104.9
4	ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթներ	չվերթ	32282	29622	32315	36211	34228	94.5

ՏԵՂԵԿԱՆՔ

2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդիրների կատարմանն ուղղված քայլերը
1	2	3	4
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	84.	Քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության երկկողմանի միջազգային հարաբերությունների ընդլայնում	<p>- &lt;&lt;Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին իրենց համապատասխան տարածքների և տարածքներից դուրս&gt;&gt; համաձայնագրի ստորագրմանն ուղղված՝</p> <p><b>Համաձայնագիրը ստորագրվել է 2012 թվականի նոյեմբերի 20-ին Աբու-Դաբի քաղաքում:</b></p> <p>- &lt;&lt;Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսլանդիայի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին&gt;&gt; համաձայնագրի ստորագրմանն ուղղված՝</p> <p><b>համաձայնագիրը նախաստորագրվել է 2010 թվականի հունիսի 30-ին Մոնտեգո Բեյ քաղաքում: Իսլանդիայի լիազորված մարմնից ակնկալվում է ստանալ ստորագրման համար ընդունելի վայրի և ամսաթվի վերաբերյալ տեղեկատվությունը:</b></p> <p>- &lt;&lt;Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին&gt;&gt; համաձայնագրի նոր նախագծի ստորագրմանն ուղղված՝</p> <p><b>նոր Համաձայնագիրը ստորագրվել է 2012 թվականի նոյեմբերի 29-ին Երևան քաղաքում, Թուրքմենստանի Նախագահի Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում:</b></p>



<p>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	<p>85.</p>	<p>ԻԿԱՕ-ի Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) կոնցեպցիայի ներդրումը &lt;&lt;Զվարթնոց&gt;&gt; աերոդրոմում և &lt;&lt;Էրեբունի&gt;&gt; աերոդրոմի օդային տարածքի վերակազմակերպում</p>	<p>- Գերակա խնդրի լուծմանն ուղղված աշխատանքների շրջանակներում մշակվել են Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) &lt;&lt;Զվարթնոց&gt;&gt; օդանավակայանի թռիքային սխեմաների նախագծերը, որոնք ներկայացվել են ս.թ. հունվարի 25-ից-26-ը Փարիզ քաղաքում կայացած ԻԿԱՕ-ի PBN-ի նպատակաուղղված խմբի (TF-6) խորհրդակցությանը: Մխեմաների նախագծերը քննարկվել են 18 եվրոպական երկրների և 6 միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից: &lt;&lt;Զվարթնոց&gt;&gt; օդանավակայանի PBN սխեմաները ստացել են նպատակաուղղված խմբի (TF-6) հավանությունը և վերջինիս կողմից հաստատվել է սխեմաների հաշվարկման մեթոդաբանությունը:</p> <p>- &lt;&lt;Հայաերոնավիգացիա&gt;&gt; ՓԲ ընկերության կողմից իրականացվել է սխեմաների ներդրման ռիսկերի և անվտանգության գնահատում:</p> <p>- Համաձայն ՀՀ կառավարությանն առնթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության 2012թվականի հոկտեմբերի 15-ի N172-Ս և ՀՀ պաշտպանության նախարարության 2012թվականի հոկտեմբերի 18-ի N1104 համատեղ հրամանի հաստատվել են Երևանի հանգուցային շրջանում ԻԿԱՕ-ի Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) ժամանման, մեկնման (RNAV1, SID/STAR) ստանդարտ երթուղիները, &lt;&lt;Զվարթնոց&gt;&gt; օդանավակայանի 09/27 վազքուղու վայրէջքի RNAV (GNSS) APCH+Baro VNAV (RNP 0.3) սխեմաները և &lt;&lt;Էրեբունի&gt;&gt; օդանավակայանի օդային տարածքի դասակարգումը, որոնք ներդրվել են 2012 դեկտեմբերի 13-ից: Նշված փոփոխությունները սահմանված կարգի համաձայն հրապարակվել են ՀՀ Աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ:</p> <p>- Ղեկավարվելով ԻԿԱՕ-ի Ասամբլեայի Ա-37 որոշումով՝ կապված անդամ-պետություններում Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) ներդրման հետ ՀՀ կառավարությանն առնթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2012 թվականի սեպտեմբերի 10-ի N153-Ս հրամանով ստեղծվել է PBN ներդրման ազգային խումբ, որի կողմից մշակվել է ՀՀ օդային տարածքում Բնութագրերի վրա հիմնված նավիգացիայի (PBN) ներդրման ծրագիր առաջիկա հինգ տարիների համար:</p>
--	------------	---	---

1	2	3	4
<p>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	<p>86.</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի զարգացում</p>	<p>- Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի զարգացման ուղղությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի մասնակցությամբ Երևանում տեղի են ունեցել հանդիպումներ Ֆրանսիայի հանրապետության Նից քաղաքի օդանավակայանի նախկին տնօրեն՝ պարոն Մուրադ Սարկիսիսիանի և Սաուդյան Արաբիայի թագավորական ընտանիքի օդաչուական անձնակազմի հրամանատար պարոն Լիոնել Սարկիսիսիանի հետ:</p> <p>Վերջիններս հայտնել են իրենց պատրաստակամությունը օգտագործել սեփական փորձը, Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի զարգացման գործում:</p> <p>Ուսումնասիրվել է Հայաստանի մի քանի օդանավակայանների, հնարավորությունները և կազմվել աշխատանքային ծրագիր՝ Հայաստանում փոքր ավիացիայի ստեղծման և զարգացման ուղղությամբ:</p> <p>2012 թվականի հունիսի 22-ին գրանցվել է «Ավիասիրողների հայկական ակումբ «Սավառնակ» Հասարակական կազմակերպությունը», որի կանոնադրական նպատակն է փոքր ավիացիայի զարգացման խթանումը:</p> <p>2012 թվականի հունիսի 8-ին գրանցվել է նոր «Մքայ Նետ Էրլայն» ավիաընկերություն, որը գրանցել է «JETSTREAM Series 3200» տիպի փոքր օդանավ, որով նախատեսվում է իրականացնել ներքին չվերթներ :</p> <p>Ավիաուսումնական կենտրոն ՓԲ ընկերության կողմից ներկայացվել է մրցույթ՝ փոքր օդանավ վարձակալելու նպատակով օդաչու-ուսանողների թռիչքային պրակտիկայի անցկացման համար :</p>
<p>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>	<p>87.</p>	<p>«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի հատուկ և հարակից կառույցների շինարարություն և արդիականացում, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար նոր բնակարաններով ապահովելու</p>	<p>- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի ուղևորների բարձրակարգ սպասարկման (VIP) սրահի կառուցումը ավարտվել է և այն գործում է սույն թվականի մարտ ամսից: Նախագահական սրահի կառուցման աշխատանքները ավարտվել են և այն հանձնվել է շահագործման:</p> <p>- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքում ծառայություններ իրականացնող կազմակերպությունների համար նախատեսված աշխատավայրերի վերանորոգման և արդիականացման աշխատանքների իրականացման նպատակահարմարությունը դեռևս գտնվում է քննարկման փուլում և Կոնցեպտների կողմից այն առաջարկվել է ներառել 2013-2017 թվականների Մաստեր Պլանում:</p> <p>- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարածքի բնակելի շենքերի բնակարանների սեփականատերերին և նախկին հանրակացարանների սենյակներում փաստացի բնակվող բնակիչների համար նոր բնակարաններով ապահովելու նպատակով՝ ավարտվել է նոր շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները և ներկայումս կատարվել են շուրջ 5.0 մլն. ԱՄՆ դոլարի կառուցման աշխատանքներ:</p>

		նպատակով աշխատանքների իրականացում	
--	--	---	--

**ՏԵՂԵԿԱՆՔ**  
**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**  
**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	121	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 944-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	<b>Ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1434-Ն որոշումով</b>
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	122	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության որակի հսկողության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	<b>Որոշման նախագիծը հանվել է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի ցանկից</b>
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	123	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1582-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	<b>Ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 4-ի թիվ 859-Ն որոշումով</b>